Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խոսքի արտահայչականության ձևավորումը մայրենի լեզվի պարապմունքների ընթացքում

Կատարող՝ Այգեզարդ գյուղի մանկապարտեզ

Դաստիարակ՝ Ասպրամ Քոչարյան

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.....4

1.1 Խոսքի արտահայտչականության կարևորությունը նախադպրոցական տարիքում.....4

1.2 մայրենի լեզվի պարապմունքների անցկացման ընթացքն ու մեթոդները.....7

ԳԼՈՒԽ 2 Մոդելավորման միջոցով խոսքի արտահայտչականության զարգացումը մայրենի լեզվի ընթացքում.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներում նախադպրոցական տարիքի երեխաների խոսքը ոչ միայն աչքի է ընկնում սակավ բառապաշարով, ոչ համապատասխան կապակցված խոսքով, այլև՝ խոսքի արտահայտչականության թերի բնույթով: Մեծ մասամբ անցկացնելով էկրանների առջև՝ երեխաները դժվար են յուրացնում մայրենի լեզվի արտահայտչական կողմը,ինչի արդյունքում նրանց խոսքը միապաղաղ է, միատոն, դանդաղ կամ արագ, շատ բարձր կամ՝ չափազանց ցածր. սրանով է պայմանավորված մեր հետազոտության արդիականությունը:

Հետաղոտության **նպատակն է** զարգացնել նախադպրոցականների խոսքի արտայատչական կողմը՝ մայրենի լեզվի պարապմունքների ընթացքում կիրառելով մոդելավորման, պիկտոգրամի մեթոդները:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել թեմայի շուրջ համապատասխան գրականություն
- Մշակել հեքիաթներ և բանաստեղծություն՝մոդելավորման և պիկտոգրամի օգնությամբ:
- Իրականացնել այդ պարապմունքները մայրենի լեզվի պարապմունքների ընթացքում:

Հետազոտական աշխատանքի փորձարարական մասն իրականացրել եքն Արտաշատ համայնքի Այգեզարդի մանկապարտեզի ավագ խմբում:

ԳԼՈՒԽ 1

1.1 Խոսքի արտահայտչականության կարևորությունը նախադպրոցական տարիքում

Բոլոր ժամանակներում էլ մանկավարժների ուսումնասիրության կենտրոնում եղել է նախադպրոցական տարիքի երեխաների արտահայտիչ խոսքի դժվարությունները: Դրանց պատճառները կարող են տարբեր լինել: Հաճախ պատճառները բխում են շնչառական անբավարարությունից, որը տեղի է ունենում սխալ շնչառության ժամանակ, կարճատև խոսքային շնչառությունը տևում է մինչև 5վայրկյան: Խոսքը հաճախ միապաղաղ է, թույլ արտահայտված, տեմբրը՝ցածր, ձայնը՝մեղմ,խոսքի տեմպը դանդաղ կամ արագացված[3]:

Երեխաների խոսքի արտահայտչականությունը բնութագրվում է մի շարք հատկանիշներով՝ մեղեդիական արտահայտությունների չճշտված ընկալում և վերարտադրություն, տրամաբանական շեշտադրում, ռիթմիկ կառույցներ, բառերի սխալ շեշտադրում, ձայնի սահմանափակ հնարավորություններ, ինչպես նաև խոսքի ռիթմական որոշակի փոփոխություններ:Թույլ է խոսքի զգացմունքային երանգավորումը, առկա է բառապաշարի աղքատություն, բանաստեղծությունների կամ հեքիաթների տեքստի վերարտադրության մեջ ձայնի ուժն օգտագործելու անկարողությունը:

Արտահայտչականության յուրացումը տալիս է ֆիզիկական և մկանային հմտություններ , օգնում է ընկալել որոշ տրամաբանական կամ քերականական իմաստ արտահայտող նշաններ:

Խոսքաշարժողական թերապիայի ընթացքում խոսքի արտահայտչականության ձևավորման աշխատանքները ընթանում են մի քանի փուլով.

1-ին փուլ՝ խոսքում արտահայտչականության մասին գաղափարների ձևավորում

2-րդ փուլ՝ խոսքում արտահայտչականության ձևավորում

Առաջին փուլի իրականացման նպատակն է ծանոթացնել երեխաներին խոսքի արտահայտչականության բազմազանությանը, ձայնի բարձրությանը, ուժին, տոնայնության ձայնային փոփոխություններին: Անհրաժեշտ է ցույց տալ, որ արտահայտչականությունը խոսքին տալիս է հուզական երանգ, օգնում է

արտահայտել զգացմունքները, ներկայացնում է երեխաներին արտահայտչականության տարբեր տեսակները և դրանց կիրառման միջոցները, սովորեցնում է խոսքում արտահայտել տարբեր հուզական երանգներ:Այս ուղղության միջոցով ընդհանուր գաղափար է կազմվում արտահայտչականության միջոցների մասին (Մ.Մ. Ալեկսեևա,Մ.Լ. Գենինգ, Ն. Ա. Գարման,Մ.Ֆ. Ֆոմիչևա և այլք[2]):

Այստեղ շատ կարևոր է երեխաներին մատուցել աշխատանքի ճիշտ ձևը և կազմակերպել խոսքի գրագետ ձևակերմանն ուղղված աշխատանքներ:

Դաստիարակը պարապմուքների ընթացքում կատարում է նյութի կրկնակի ընթերցում, առաջին անգամ առանց որևէ արտահայտչական միջոց կիրառելով, իսկ երկրորդ անգամ նյութին փոխանցելով իր հուզերն ու ապրումները, համապատասխան արտահայտչամիջոցների օգնությամբ: Այնուհետև կատարվում է վերը նշված գործողությունների տրամաբանական վերլուծություն:

Երկրորդ ուղղության միջոցով կատարվում է արտահայտչականության միջոցների ծանոթացում՝ երեխաները ծանոթանում են պատմողական, հարցական և բացականչական իմաստ արտահայտող խոսքին և դրանց արտահայտման ձևերին:Ծանոթանում յուրաքանչյուրի առանձնահատկություններին և կիրառում բանավոր խոսքում[4]:

Պատմողական արտահայտման միջոցին ծանոթացնելու համար դաստիարակը երեխաների համար հնչեցնում է նախադասություն և հրահանգում, որոշել թե ինչ նախադասություն է՝ հարցական թե պատմողական: Պատմողական նախադասության կարևոր առանձնահատկությունն այն է, որ արտահայտման միջոցը հստակեցված է:

Հաջորդը հարցական արտահայտչամիջոցի ծանոթացումն է: Նախապես երեխաների ուշադրությունը հրավիրվում է այն փաստի վրա, որ ձայնի փոփոխությունը կարող է տարբեր զգացմունքային իրավիճակներ հաղորդել: Օրինակ, փոխելով ձայնի տոնայնությունը, կարող եք որևէ բան հարցնել:

Երրորդ ուղղությունը ծանոթացնում է բացականչական արտահայտչամիջոցի և իր նշանակության հետ: Երեխաներին ցուցադրվում են մի քանի թեմատիկ նկարներ, որոնք համապատասխանում են. ա~խ, ու~խ, օ~յ, ուռա~ և այլն: Կազմակերպվում է յուրաքանչյուր նկարի շուրջ մեկնաբանություն:

Օրինակ. Աղջիկը հիվանդ է: Ինչպիսի՞ ձայն կհանի նա….

Կամ Տղաները հաղթում են խաղում: Ինչպե՞ս կբացականչեն նրանք… և այլն…

Երկրորդ փուլի կազմակերպման նպատակն է խոսքում արտահայտիչ կառույցների ձևավորումը: Որի ժամանակ կազմվում է վարժությունների համակարգ՝գիտակցված ընկալման և ուսուցման վաղ փուլերում բովանդակային տարրերի օգտագործման համար: Այս համակարգը նպաստում է ձայնի ուժի , ընդարձակության, ձայնի արտահայտչականության զարգացմանը:Ձայնավարժության աշխատանքը սկսվում է արտասանության ավարտից հետո, որը կարող է ուղեկցվել նաև երաժշտությամբ: Երաժշտության տոնայնության փոփոխությունը նպաստում է ձայնային հատկանիշների զարգացմանը՝ ապահովելով բարձր կամ ցածր տոնայնություն:

Կյանքի չորրորդ տարում շարունակվում է երեխաների խոսքի մշակույթի զարգացումը: Որի գերխնդիրն է ոչ միայն հստակեցնել և ամրապնդել նախադպրոցականների արդեն յուրացված հնչյունները, նպաստել պարզ և հստակ արտասանությանը, այլև օգնում է իմանալ արտահայտչականության այնպիսի ձևեր, որոնք կկանխեն սխալ արտասանությունը[2]:

Դաստիարակի խնդիրն է շարունակել զարգացնել խոսքաշարժողական օրգանները,ը, խոսքային շնչառությունը, լսողական ընկալումը, խոսքային լսողությունը, օգնում է երեխաներին ճիշտ օգտվել խոսքային արտահայտչամիջոցներից:

Մեթոդական գրականության մեջ լայնորեն ուսումնասիրվել է չորս տարեկան երեխաների արտահայտչականության դրսևորումները. (Մ.Մ. Ալեկսեևա,Մ.Լ. Գենինգ, Ն. Ա. Գարման, Մ.Ֆ. Ֆոմիչևա և այլք) [2]: Նրանք անդրադառնալով այդ խնդրին, նշում են տվյալ տարիքում մշակված հնչյունների քանակը, դրանց ամրագրման հերթականությունը, խաղեր, վարժություններ, գործնական նյութեր, որոնք դաստիարակը կարող է կիրառել աշխատանքի ընթացքում:

Այս տարիքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ կատարվում է արտաբերման օրգանների հետագա ամրապնդումը, ավելի համակարգված են գործում լեզվի, շուրթերի և ծնոտի մկանները, որոնք նպաստում են ձայնային ապարատի ձևավորմանը: Երեխաները սկսում են ճիշտ օգտագործել մայրենի լեզվի

հնչյուններ, բառեր՝ օգտագործելով 2-3 բաղաձայն:Լեզվի մկանների ամրապնդման շնորհիվ ձայնը հնչում է ավելի մեղմ[3]:

Որպես կանոն, երեխաների մեծ մասը սխալ է արտաբերում հնչյունները, դրանք փոխարինելով մեկ այլ հնչյունի.

Օրինակ. Շ-ս, ր-ռ,զ-ս,ր-յ (շիշ-սիս, գրատախտակ-գյատախտակ)

Բազմավանկ բառերում, հատկապես բաղաձայների բազմակի կրկնության ժամանակ, երեխաները հաճախ հնչյունները վերարտադրում են առանձին վանկերով: Ոչ բոլոր երեխաները կարող են վերահսկել իրենց ձայնային ապարատը, այսինքն կախված խոսքի բովանդակությունից, փոխվում է ձայնի ծավալը, բարձրությունը և տեմպը[6] :

Այս տարիքում բարելավվում է խոսքային լսողությունը: Չնայած այն հանգամանքին, որ դաստիարակչական դժվարությունների արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաները չեն կարողանում ճիշտ արտահայտել առանձին հնչյունները:

Շատ երեխաներ հասկանում են, որ իրենց արտաբերված խոսքում կան սխալ արտաբերված հնչյուններ, սակայն չեն կարողանում ցույց տալ, թե որտեղ են սխալվում:

Այս տարիքային փուլում հիմնական խնդիրներից է խոսքի ձայնային մշակույթի ձևավորումը:Սակայն պակաս կարևոր չէ նաև խոսքի լսողական ընկալման զարգացումը: Դաստիարակը շարունակում է սովորեցնել երեխաներին լսել հնչյունները, ձայնային հնչյունները օգնում են հասկանալ բառի հնչյունային կողմը, բառերում լսելով հնչյունները[2]:

1.2 Մայրենի լեզվի պարապմունքների անցկացման ընթացքն ու մեթոդները

Խոսքի հնչյունային մշակույթի զարգացմանն ուղղված աշխատանքները կրում են շարունակական բնույթ:Հնչյունային կուլտուրայի մշակումը մանկապարտեզում երեխայի խոսքի զարգացման կարևոր խնդիրներից է: Հնչյունային լեզուն միշտ եղել է հաղորդակցման միակ լեզունԼ Նախապես ,մշակվում է աշխատանքների համակարգ՝ ուղղված լսողական ուշադրության զարգացմանը:[էջ 52, տետր]

Դաստիարակը շարունակում է ամրապնդել երեխաների խոսքային լսողությունը, որի օգնությամբ նրանք տարբերակում են ձայնավոր հնչյունները: Խոսքաշարժողական ապարատի զարգացումը ուղղված է երեխաների խոսքի արտաբերմանը առօրյայում և ցանկացած իրադրության մեջ: Կյանքի չորրորդ տարում երեխաների խոսքը կազմվում է միևնույն բովանդակություն արտահայտող մի քանի արտահայտություններից: Այնուամենայնիվ, նրանց խոսքը միշտ չէ, որ համապատասխանում է ճիշտ տեմպին, արտահայտչականության միջոցներին:

Ճիշտ տեմպի զարգացման խնդիրը հանգեցնում է նրան, որ երեխաները սովորեն խոսել առանց շտապելու, ընկալել խոսքի արագությունը,օգտվել խոսքային արտահայտչամիջոցներից:

Խոսքի հնչյունային մշակույթին ուղղված պարապմունքների կազմակերպումը ընթանում է մի քանի փուլով: Յուրաքանչյուր փուլ ուղղված է որոշակի հնչյունների ճիշտ արտասանությանը: Որպես կանոն, այդ հնչյունները համակարգված են ըստ արտաբերման օրգանների.

Շրթունքային-մ,պ,բ

Քիմքային- տ,դ,ն

Շրթնատամնային- ֆ,վ

Դաստիարակը կիրառում է խաղեր և վարժություններ, որոնք նախատեսված են ընկալել ձայնային լսողությունը(տե՛ս հավելվածում): Նման վարժությունների կազմակերպման նպատակն է սովորեցնել երեխաներին հնչյունները արտաբերել ճիշտ և արտահայտիչ, հստակեցնել և ամրապնդել ձայնը:

Վ.Վ. Գերբովան նշում է, որ մշտական հետաքրքրությունը պահպանելու համար պետք է օգտվել մի շարք ուսումնական մեթոդներից՝ անհատական և խմբային կրկնություններ, տարբեր դիդակտիկ խաղերի կիրառում, խաղ-բեմականացումներ:

Ճիշտ հնչարտասանության ձևավորումը իրականացվում է հետևյալ կերպ: Սկզբում դաստիարակը ամրապնդում է ձայնավոր հնչյունների արտասանությունը՝ա,ու,ո,է,ի,ը [3]:

Արդեն ամսվա վերջում պարապմունքները կազմակերպվում են անցած նյութի կրկնության հիման վրա, որտեղ երեխաները արտաբերում են հնչյունների ճիշտ արտասանությունը, ինչպես նաև դրանց տարբերակումը լսողությամբ:

Յուրաքանչյուր հնչյունային խմբի արտասանության ձևավորումը տրամադրվում է մոտ երեք վարժություն և մեկ պարապմունք: Դաստիարակը սովորեցում է երեխաներրին ուշադիր լսել բառերը, տարբերակել ձայնավոր հնչյունները, խոսքի տեմպը և ձայնային արտահայտչականության միջոցները: Օրինակ, երեխաներին ցուցադրվում են այնպիսի խաղալիքներ կամ նկարներ, որոնք արտասանությամբ շատ մոտ են կամ նման (սար-լար,արջ-որջ,բեռ-լեռ,կար-կեռ): Դաստիարակը անվանում է պատկերները, ապա ամրապնդում հարցադրումների միջոցով:

Օրինակ. Նատալի, որտե՞ղ է գտնվում արջի պատկերը….

Կյանքի երրորդ տարում երեխաները դեռևս չեն կարողանում ինքնուրույն տարբերակել խոսքում առկա հնչյունները, հետևաբար ճիշտ հնչարտաբերությանն ուղղված, դաստիարակը կազմակերպում է այնպիսի վարժություններ, որոնք առավելագույն կամրապնդեն երեխայի խոսքը, օրինակ.

Ու-ու-ու-ու-րագ

Ա-ա-ա-ա-ա-րև

Հնչյունների արտասանության ամրապնդման համար առավել արտահայտիչ և շեշտադրված է արտասանվում բառում այն հնչյունը, որը նախատեսված է ուսուցանելու համար: Արդյուքնում, այս աշխատանքը նպաստում է երեխային ոչ միայն ճանաչել հնչյունը, այլև արտաբերել արտահայտչականության տարբեր միջոցներով:

Արդեն, որոշակի աշխատանք ծավալելուց հետ, երեխաները տարբերակում են երկու իրար նման հնչյունները, օրինակ. Զ-ս և դաստիարակը առաջարկում է անվանել , թե տվյալ բառում որ հնչյունն է արտաբերվում[4]:

Այսպիսով, խոսքի արտահայտչականության զարգացումը շարունակվում է մինչև հինգ տարեկանը:

ԳԼՈՒԽ 2

ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԽՈՍՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեր հետազոտական աշխատանքի 2-րդ՝ գործնական մասում ներկայացրել ենք մայրենի լեզվի պարապմունքների օրինակներ, որտեղ փորձել ենք ցույց տալ,, թե ինչպես ենք սաների խոսքի արտահյտիչ կողմը զարգացնում պիկտոգրամների և մոդելների միջոցով:

Մեծ ճանաչում են ստացել Լ. Ա. Վենգերի և նրա գաղափարակիցների աշխատանքները՝ կապված մոդելավորման հետ: Գործունեության տարբեր տեսակներում ունկնդրածը վերարտադրելու համար գործածում են գործողություններն իրականացնող կերպարների նկարներ: Նախ՝ ստեղծվում է լսված նյութի բովանդակության սխեմատիկ պլան: Այս ճանապարհով երեխայի մեջ ձևավորվում է որոշակի պատկերացում նյութի վերաբերյալ, որով էլ նա առաջնորդվում է հետագա խոսքային գործունեության ընթացքում[1]:

Ստորև ներկայացնում ենք մեր կողմից իրականացված պարապմունքները:

Թեմա՝ «Պապն ու շաղգամը «

Տեսակ՝ զրույց,ստեղծագործական աշխատանք

Նպատակ՝ 1. զարգացնել հետաքրքրություն գեղարվեստական գրականության հանդեպ

2. Զարգացնել երեխաների մեջ գեղարվեստական ճաշակ

3. Ձևավորել տվյալ նյութը մինչև վերջ լսելու,հարցերին պատասխանելու, հեքիաթը վերապատմելու կարողություն:

4.Իրականացնել ն/դ-ի կապակցված խոսքի զարգացումը մոդելավորման միջոցով

Կապը չափորոշչի հետ՝

1. Խոսք և հաղորդակցում
2. Հուզական ոլորտ
3. Ճանաչողական ոլորտ

Վերջնարդյունք՝ Հարցերի միջոցով վեր հանել հեքիաթում ծավալվող պիկտոգրամի միջոցով իրականացվող գործողությունները:

Դռան առաջ մի անգամ

Պապը ցանեց մի շաղգամ:

Շաղգամն աճեց,

Մեծացավ.

Պապը քաշեց, քաշքշեց,

Շաղգամն հողից

Չհանեց:

Պապը կանչեց

Տատիկին.

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Հա՛ քաշեցին,

Քաշքշեցին,

Շաղգամը հողից

Չհանեցին:

Տատը կանչեց

Թոռնիկին,

Թոռը՝ տատից,

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Հա՛ քաշեցին,

Քաշքշեցին,

Շաղգամը հողից

Չհանեցին:

Թոռը կանչեց շնիկին.

Շունը՝ թոռից,

Թոռը՝ տատից,

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Հա՛ քաշեցին, քաշքշեցին,

Շաղգամը հողից

Չհանեցին:

Շունը կանչեց

Փիսոյին.

Փիսոն՝ շնից,

Շունը՝ թոռից,

Թոռը՝ տատից,

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Հա՛ քաշեցին,

Քաշքշեցին,

Շաղգամը հողից չհանեցին:

Փիսոն կանչեց

Մկնիկին.

Մուկը՝ փիսոյից,

Փիսոն՝ շնից,

Շունը՝ թոռից,

Թոռը՝ տատից,

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Որ քաշեցին, քաշքշեցին,

Շաղգամը հողից

Հանեցի՞ն:

Թեմա ՝ «Այբոլիտ»

Տեսակ ՝ Ոտանավորի ուսուցում պիկտոգրամի օրինակով

Նպատակ ՝ 1. Իրականացնել բանաստեղծության ուսուցումը նորագույն և արդյունավետ միջոցներից՝ մոդելավորմամբ:

2. Զարգացնել ն/դ տարիքի երեխաների մտավոր և ստեղծագործական կարողությունները խորհրդանիշներից, նշանների կիրառմամբ:

Կապը չափորոշչի հետ՝

1. **Խոսք և հաղորդակցում**
2. **Հուզական ոլորտ**
3. **Ճանաչողական ոլորտ**
4. **Իմացական ոլորտ**

Վերջնարդյունք ՝ 1. Առաջացնել հետաքրքրություն ոտանավորի մոդելավորմանը:

2. Առանձնացնել ոտանավորի դրական ու Բարի կողմերը,թվարկել դրանք:

3. Լսել երեխաների կարծիքը տվյալ աշխատանքի ընթացքում:

Բժիշկ է նա բարեսիրտ,

Եվ անունը՝ Այբոլիտ:

Ա՛յ, նստել է ծառի տակ,

Որ ձեզ բուժի շարունակ:

Դե՛, բուժվելու եկեք դուք՝

Գայլ ու աղվես, որդ ու ձուկ,

Կոկորդիլոս ու քոթոթ,

Եկե՛ք, բուժվեք նրա մոտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով թեմայի շուրջ եղած գրականությունը, իրականացնելով փոքրիկ հետազոտությունը՝ եկանք հետևյալ եզրկացություններին.

- Մեր ժամանակներում խոսքի արտահայտչականության խնդիրը բավական արդիական է, քանի որ այսօրվա երեխան այլ բան է պահանջում մեզանից. նա պատրաստի խոսք է լսում, շատ հաճախ՝ առանց դրան արձագանքելու և առանց հուզականության, ուստի մանկավարժի գերխնդիրն է՝ անել ամեն բան՝ այդ բացը լրացնելու համար:
- Մոդելավորման և պիկտոգրամի մեթոդները նոր չեն մանկավարժության բնագավառում, բայց մեր երկրում դրանք շատ քիչ են կիրառվում, և ունեն բավական արդյունավետ մանկավարժական ազդեցություն ինչպես երեխայի խոսքի, այնպես էլ՝ մտավոր այլ գործընթացների զարգացման վրա:
- Մեր կողմից իրկանացված պարապմունքները երեխաներին շատ դուր եկան. դրանք նրանց համար նորարար էին, հետաքրքիր,ուստի մենք կարողացանք լուծել մեր առջև դրված մանկավարժական պահանջը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խուգեյան Ա.Վ. <<Մոդելավորման մեթոդը նախադպրոցական տարիքուն>> Հ. Թումանյանի ծննդյան 145 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2014, էր 91
2. Алексеева М.М. Методика развития речи и обучения родному языку дошкольников / М.М. Алексеева, В.И. Яшина. М.: Издательский центр «Академия», 2000. 400 с.
3. Анищенкова Е.С. Речевая гимнастика для развития речи дошкольников. М.: АСТ: Астрель, 2007. 61 с.
4. Ушакова О.С. Программа развития речи в детском саду: 4-е изд., перераб. М., 2017. 96 с
5. Шевцова Е. Е.Технологии формирования интонационной стороны речи / Е.Е. Шевцова, Л.В. Забродина. Изд-во: АСТ, Астрель , 2009. 222 с
6. https://works.doklad.ru/view/Xe9V1zTDK64/all.html